ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Ջերմաէլեկտրանախագիծ» ՍՊԸ և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի միջև էներգետիկայի և բնապահպանական ոլորտներում գիտագործնական համագործակցության մասին

ք. Հրազդան « 22 » հունիսի 2022թ.

«Ջերմաէլեկտրանախագիծ» ՍՊԸ-ն և «Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ «Կողմեր», իսկ առանձին հիշատակման պարագայում՝ «Կողմ»), բարձր գնահատելով ուսումնական և արտադրական ձեռնարկությունների համագործակցության արդյունավետությունը ջերմաէներգետիկական ու էլեկտրատեխնիկական համակարգերի, էներգիայի այլընտրանքային աղբյուրների և շրջակա միջավայրի պահպանության հարցերի ուսումնասիրման ոլորտներում, ցանկանալով խթանել գիտագործնական համագործակցությունը էներգետիկական և բնապահպանական խնդիրների լուծման և դրանց գործնականում կիրառման նպատակով, համաձայնության եկան հետևյալ հարցերում.

Հոդված 1

հուշագրի նպատակը

1. Սույն Հուշագրի նպատակն է ստեղծել և ամրապնդել գիտագործնական համագործակցությունը Կողմերի միջև հետևյալ ոլորտներում.

1.1. ջերմամեխանիկական և էլեկտրատեխնիկական տեղակայանքների ու սարքավորումների նախագծման և թողարկման-կարգաբերման աշխատանքներ,

1.2. այլընտրանքային և վերականգնվող էներգետիկ օբյեկտների նախագծման և թողարկման-կարգաբերման աշխատանքներ:

2. Կողմերը խրախուսում են գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակումը և փոխադարձաբար կաջակցեն հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացմանը:

Հոդված 2

համագործակցության իրականացման ձևերը

1. Կողմերը պատրաստակամություն են հայտնում պարբերաբար իրականացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության փոխանակում և համագործակցության հնարավորությունների քննարկում:

2. Տեղեկատվության փոխանակումը չպետք է հանգեցնի օրենքով պահպանվող տեղեկատվության հրապարակման: Կողմերը համաձայնվում են չհրապարակել որևէ տեղեկատվություն, որն իրենց տրամադրվել կամ հայտնի է դարձել սույն հուշագրի

շրջանակներում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկատվությունը հասանելի է հանրությանը կամ երբ առկա է հրապարակման վերաբերյալ մյուս Կողմի համաձայնությունը կամ երբ տեղեկատվության բացահայտումը կատարվել է օրենքի պահանջով, որի մասին մյուս Կողմը կտեղեկացվի անմիջապես:

3. Կողմերի աշխատակիցները հանդիպում են ըստ անհրաժեշտության սույն հուշագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների արդյունքները գնահատելու և հետագա աշխատանքները ծրագրելու նպատակով: Կողմերը համագործակցում են հետևյալ ձևերով.

3.1. գիտագործնական քննարկումներին, սեմինարներին և գիտաժողովներին մասնակցություն,

3.2. փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ ծրագրերի, այդ թվում՝ լաբորատոր և արտադրական փորձարկումների ծրագրերի քննարկման և դրանց արդյունքների վերլուծության նպատակով աշխատանքային հանդիպումների անցկացում:

4. Կողմերը համաձայնվում են, որ հուշագրի ստորագրման և գործողության մասին տեղեկատվությունը կարող է տարածվել առանց սահմանափակումների, ներառյալ՝ մամլո հաղորդագրությունների, ինտերնետ կայքերի և տեղեկատվական բուկլետների միջոցով: Հուշագրի գործողության դադարեցման դեպքում Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր ողջամիտ միջոցները երկու շաբաթվա ընթացքում հուշագրի վերաբերյալ նշումները նշված կրիչներից (կայքեր, բուկլետներ և այլն) վերացնելու համար:

Հոդված 3

հուշագրի ժամկետը, ավարտը, փոփոխությունը

1. Սույն հուշագիրը գործում է անժամկետ, Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել այն՝ այդ մասին առնվազն երկու շաբաթ առաջ տեղեկացնելով մյուս Կողմերին:

2. Սույն հուշագրով փոփոխություններ կարող են կատարվել Կողմերի համաձայնությամբ:

Հոդված 4

ծանուցումներ և հասցեներ

1. Սույն հուշագրի շրջանակներում Կողմերի միջև ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդակցություն կատարվում է գրավոր՝ առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստով կամ հեռախոսով.

«Ջերմաէլեկտրանախագիծ» ՍՊԸ
Տ. Հայրապետյան, Տնօրեն,
Իրավաբանական հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր, նոր թաղամաս, 3 փ, տուն 18,
էլ. փոստ՝ info@tproject.am,

հեռախոս՝ (+37494) 301706

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
Ա. Սարիբեկյան, Տնօրեն,
Գործունեության հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 3,
էլ. փոստ՝ razdan.usum.2114@mail.ru,
հեռախոս՝ (+37493) 938045

Հոդված 5
այլ հարցեր

1. Կողմերից որևէ մեկի կողմից սույն հուշագրի դրույթներից մեկը չկատարելը չի կարող մեկնաբանվել որպես հրաժարում հուշագրի տվյալ կամ այլ դրույթից: Հուշագրի դրույթներից որևէ մեկի անիրագործելիությունը չի ազդում մյուս դրույթների գործողության վրա, եթե դրանք կարող են գործել առանց խնդրահարույց դրույթի կիրառման:

2. Սույն հուշագիրը մտադրությունների մասին հուշագիր է, որն արտահայտում է Կողմերի՝ համագործակցելու ցանկությունը և պատրաստակամությունը և չի պարունակում իրավաբանորեն պարտադիր դրույթներ՝ բացառությամբ սույն հուշագրի Հոդված 2.2-ում նշված տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու վերաբերյալ դրույթների:

3. Սույն հուշագիրը կնքելով Կողմերը չեն ստեղծում որևէ ընկերակցություն կամ այլ իրավաբանական անձ, չեն մտնում համատեղ գործունեության կամ պայմանագրային այլ հարաբերությունների մեջ: Սույն հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական կամ այլ գույքային պարտավորություններ չի ստեղծում:

4. Սույն հուշագրով նախատեսված համագործակցությունը բացառիկ իրավունքներ չի վերապահում, և Կողմերից յուրաքանչյուրը ազատ է նմանատիպ հարաբերություններ հաստատել այլ անձանց հետ:

«Ջերմաէլեկտրանախագիծ» ՍՊԸ	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
Տնօրեն	Տնօրեն՝
/Տ. Հայրապետյան	/Ա. Սարիբեկյան
Կ.Տ	Կ.Տ